

ՄԵՂԱՂՈՅԱԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Պետիկ Սկրտչյան

ԵՊՀ քրեական դատավարության և

կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ,

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի տեղակալ

ՀՀ դատաիրավական բարեփոխումների արդի փուլն առանձնացավ քրեադատավարական օրենսդրության կատարելագործմամբ և դրանում դատավարական նոր ինստիտուտների ներդրմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ նաև՝ ՀՀ քր. դատ. օր.) 30.06.21 թ. ՀՕ-307-Ն օրենքով ներդրվեց ազգային օրենսդրությանն անձանոթ ինստիտուտ, այն է՝ «Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթը», որը կանոնակարգող նորմերը ուժի մեջ մտան 2021 թվականի օգոստոս ամսին:

Դրանից հետո առաջացան այս իստիտուտի կիրառման հետ կապված որոշ հարցեր, որոնցից է նաև այն, թե արդյոք մեղադրյալի բացակայությամբ վարույթը (այսուհետ նաև՝ հեռակա վարույթ) կարող է կիրառվել այն քրեական գործերով, որոնցով վարույթը նախաձեռնվել է նախքան հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելը:

Հարկ է նկատել, որ վերոգրյալ հարցադրումն առաջ քաշելու համար հիմք է ՀՀ քր. դատ. օր.-ի 4-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված այն կարգավորումը, որով սահմանված է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին հետադարձ ուժ տալու արգելքը, ըստ որի՝ անձի վիճակը վատթարացնող նորմը չի կարող կիրառվել մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելն սկսված վարույթի վրա: Իսկ քրեական վարույթի սկիզբը, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 4-րդ կետի, սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս, այլ խոսքով՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու պահից: Այսպիսով ստացվում է, որ եթե արդեն առկա է սկսված վարույթ, ու եթե պարզվի, որ հեռակա բացակայության վարույթն ամրագրող քրեադատավարական նորմերը անձի վիճակը վատթարացնող են, ապա վերոգրյալ հարցի պատասխանը պետք է լինի բացասական:

Աներկբա է, որ նշված հարցադրման պատասխանը խարսխված է ժամանակի մեջ քրեադատավարական նորմերի գործողության խնդրին: Հետևաբար, հարցադրմանը պատասխանելու համար անհրաժեշտ է նախ և առաջ անդրադարձնալ այդ հարցերին:

Այսպես, **ժամանակի մեջ** դատավարական օրենքի գործողությունը կարգավորվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 4-րդ հոդվածում, համաձայն որի՝ քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ:

Այս կանոնից հետևում է, որ անկախ այն բանից, թե երբ է կատարվել հանցագործությունը, և այն կատարելու պահին ինչպիսի քրեական կամ քրեադատավարական օրենքներ են գործել, քրեական գործի հարուցումը, դրա նախնական կամ դատական քննությունն իրականացվում են **տվյալ պահին** գործող դատավարական օրենքին համապատասխան:

Այսինքն՝ եթե քրեական վարույթ նախաձեռնելու, այլ վարույթային գործողություններ կատարելու կամ որոշումներ ընդունելու պահին **փոփոխվում է քրեական**

դատավարության օրենսգիրքը, ապա կիրառման է ենթակա փոփոխված օրենքը և ոչ թե քրեական վարույթ նախաձեռնելու պահին գործող օրենքը:

Ինչպես վերը նշվեց, եթե վարույթը սկսվել է, որից հետո քրեադատավարական օրենքում կատարվել են փոփոխություններ, ապա կիրառման է ենթակա փոփոխված օրենքը: Սակայն եթե փոփոխված քրեադատավարական օրենքով վերացվում, սահմանափակվում են դատավարության մասնակիցների իրավունքները, կամ նրանց վիճակն այլ կերպ վատթարանում է, ապա **փոփոխված քրեադատավարական օրենքը հետադարձ ուժ չունի և չի տարածվում** մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելն սկսված վարույթի նկատմամբ (ՀՀ քր. դատ. օր-ի 4-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՀՀ Վճռաբեկ դատարանը, 2007 թվականի հունիսի 1-ին կայացրած թիվ ՎԲ-111/07 գործով որոշմամբ անդրադառնալով ՀՀ քր. դատ. օր-ի 4-րդ հոդվածի մեկնաբանությանը, իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական նորմի կառուցվածքից բխում է, որ ժամանակի մեջ քրեական դատավարական օրենքի ներգործությունը սահմանող կանոնը տարածվում է այն իրավահարաբերությունների վրա, որոնք ընթանում են հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ և կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: (...):

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական նորմի գործողությանը, ապա այն տարածվում է այն դեպքերի վրա, երբ իրավահարաբերությունն առաջանալուց **հետո** օրենքը փոխվում է ի վնաս դատավարության մասնակիցների (...):» (տե՛ս Աշոտ Հարությունյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-111/07 որոշումը):

Չարգացնելով Ա. Հարությունյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը 2012 թվականի մարտի 30-ին կայացրած թիվ ՏԴ/0088/01/11 գործով որոշմամբ արձանագրել է, «*ժամանակի մեջ քրեադատավարական իրավունքի նորմերի գործողության առանձնահատկությունն այն է, որ գործի քննության կոնկրետ փուլում կիրառման ենթակա են տվյալ պահին գործող քրեադատավարական օրենքի դրույթները՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ քրեադատավարական օրենք է գործել հանցանքը կատարելու պահին:*

ժամանակի մեջ քրեադատավարական օրենքի գործողության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնից միակ բացառությունը նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասով, որը վերաբերում է դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեադատավարական օրենքի հետադարձ ուժի արգելքին: Նշված արգելքի իմաստով սկսված վարույթի ընթացքում կիրառման ենթակա չէ դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքը: Այլ կերպ սկսված վարույթը շարունակվում է քրեադատավարական հին օրենքին համապատասխան, եթե նոր օրենքով վերացվում, սահմանափակվում են դատավարության մասնակցի իրավունքները կամ այլ կերպ վատթարացվում է նրա վիճակը:

(...) դատավարության մասնակցի իրավունքները և կարգավիճակը կապված են քրեական դատավարության կոնկրետ փուլում որոշակի իրավահարաբերությունների առկայության հետ: Նշված իրավահարաբերությունների առկայությամբ պայմանավորված՝ քրեական գործով վարույթի ընթացքում դատավարության մասնակիցը ձեռք է բերում տվյալ փուլին բնորոշ կարգավիճակ և դրանից բխող իրավունքներ: Ուստի, քրեադատավարական օրենքի փոփոխության հետևանքով անձի իրավունքների սահմանափակման կամ նրա վիճակի վատթարացման մասին դատողություններ անելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել, թե

նախքան քրեադատավարական օրենքում փոփոխություն կատարելը անձն արդյոք օժտված է եղել որոշակի իրավունքով, որը սահմանափակվել է, կամ ունեցել է որոշակի կարգավիճակ, որը վատթարացել է օրենքի փոփոխության հետևանքով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «< քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով արգելվում է կիրառել դատավարական այն օրենքը, որը վերացնում կամ սահմանափակում է այդ օրենքի ուժի մեջ մտնելու պահին դատավարության մասնակցի ունեցած իրավունքը, ինչպես նաև այլ կերպ վատթարացնում է նրա՝ այդ պահին ունեցած կարգավիճակը»:

Նկատի ունենալով «< քր. դատ. օր.-ի 4-րդ հոդվածին Վճռաբեկ դատարանի տված մեկնաբանությունները՝ կարելի է արձանագրել, որ նոր ընդունված դատավարական օրենքը հետադարձության կարգով կիրառելու հարցի լուծումը բարձր դատարանը ամենևին չի պայմանավորում տվյալ գործով վարույթի սկսված լինելով առհասարակ, այլ կապում է քրեական վարույթի որոշակի փուլում առաջացող իրավահարաբերության և այդ իրավահարաբերության մասնակիցների դատավարական կարգավիճակի փոփոխության հետ:

Այսպիսով, պարզելու, թե մեղադրյալի բացակայությամբ վարույթի կարգը կանոնակարգող նորմերը կիրառելի են արդյոք մինչև դրանց ուժի մեջ մտնելը սկսված վարույթների նկատմամբ, նախ և առաջ անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե մեղադրյալի բացակայությամբ վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելուց հետո դրանց կիրառումը արդեն իսկ նախաձեռնված վարույթներով արդյոք առաջացնում է օրենքի հետադարձության խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված՝ կարծում ենք, որ հարկ է առանձնացնել հետևյալ երկու իրավիճակները.

առաջին՝ թեև քրեական վարույթը նախաձեռնվել է մինչև հեռակա վարույթը կանոնակարգող նորմերի ուժի մեջ մտնելը, սակայն մեղադրյալը գործի քննությունից խուսափել է այդ նորմերի ուժի մեջ մտնելուց հետո,

երկրորդ՝ մեղադրյալը գործի քննությունից խուսափել է մինչև հեռակա վարույթի կարգը կանոնակարգող նորմերի ուժի մեջ մտնելը:

Այսպիսով, այն դեպքում, երբ մեղադրյալը քրեական վարույթին մասնակցելուց սկսում է խուսափել հեռակա վարույթը կանոնակարգող նորմերի ուժի մեջ մտնելուց հետո, ապա նկարագրված իրավիճակում, կարծում ենք, կիրառելի է քր. դատ. օր.-ի 4-րդ հոդվածի 1-ին մասի կանոնը, և տվյալ վարույթի հատուկ կարգը սահմանող նորմերի կիրառումը պետք է գնահատվի իրավաչափ: Այլ կերպ ասած՝ երբ հեռակա վարույթի կիրառման հիմքը ի հայտ է գալիս տվյալ վարույթը կանոնակարգող քրեադատավարական նորմերի ուժի մեջ մտնելուց հետո (և բացակայում են հեռակա վարույթը բացառող հանգամանքները), ապա հեռակա վարույթի կիրառումը տվյալ քրեական գործով խնդիր չի առաջացնում: Ասվածը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ քննարկվող իրավիճակում օրենքը հետադարձության կարգով կիրառելու հարց չի առաջանում, քանզի այն իրավահարաբերությունը (մեղադրյալի՝ քրեական վարույթին մասնակցելուց խուսափելը), որը ենթակա է կարգավորման նոր ուժի մեջ մտած քրեադատավարական օրենքով, ծագում է (ի հայտ է գալիս) այդ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո միայն: Հետևաբար, նկարագրված դեպքերում կիրառելի է «< քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ: Այստեղ տեղին է հիշատակել Պ.Ա.Լուպինսկայայի այն միտքը, որ եթե քրեական գործով վարույթը սկսվել է նոր քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց առաջ, ապա մինչև այդ կատարված և ընդունված բոլոր դատավարական գործողություններն ու որոշումները պահպանում են իրենց ուժը, իսկ հետագա վարույթը նոր

քրեական դատավարության օրենսգրքի (կամ դրա որևէ նորմի) ուժի մեջ մտնելու պահից իրականացվում է համապատասխան դրա:

Մինչդեռ, երբ մեղադրյալը քրեական վարույթին մասնակցելուց խուսափել է, և, օրինակ, այդ հիմքով քրեական գործով վարույթը կասեցվել է, որից հետո են միայն հեռակա վարույթի կարգը կանոնակարգող նորմերը մտել ուժի մեջ, ապա, արդյոք նման դեպքերում կարող է խոսք լինել օրենքին հետադարձություն շնորհելու մասին:

Դատավարագիտության մեջ գերիշխում է այն կարծիքը, որ, ի տարբերություն քրեական օրենքի, քրեադատավարական օրենքը որևէ դեպքում չունի հետադարձ ուժ, և այս պնդումը կարելի է համարել քրեական դատավարության աքսիոմա¹: Նոր ընդունված օրենքն իրավական հետևանքներ է առաջացնում այն փաստերի կապակցությամբ, որոնք առաջանում են այդ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: Ասվածը վկայում է ոչ թե օրենքի հետադարձ ուժի, այլ օրենքի անմիջական գործողության մասին²:

Օրենքի հետադարձության հարցը դիտարկելիս անհրաժեշտ է օբյեկտիվ իրավունքի գոյությունը տարանջատել սուբյեկտիվ դատավարական իրավունքի սահմանների գոյության հարցերից: Ասվածի կապակցությամբ հիշատակման է արժանի հին, սակայն, ցավոք սրտի, ներկայումս գրեթե մոռացված հայեցակարգը, որը ստեղծվել է Ֆ. Կ. Սավիլիի, հետագայում զարգացվել Ֆ. Լասսալեի կողմից³: Այս տեսությունը մասամբ պաշտպանում էր նաև Ի. Յա. Ֆոյնիցկին: Համաձայն այդ տեսության՝ երբեմնի ձեռք բերված սուբյեկտիվ իրավունքը, որպես կանոն, պահպանում է իր ուժը, և հետագայում այն ձեռք բերելու պայմանների փոփոխությունը չի հանգեցնում այդ իրավունքի կորստին այն պարզ պատճառով, որ այդ իրավունքն արդեն իսկ ձեռք է բերվել, և դրա գոյության վրա չեն կարող ազդել այն նոր հանգամանքները, որոնք սահմանում են այդ իրավունքի ձեռքբերման այլ պայմաններ: Այլ կերպ ասած՝ եթե անձը արդեն ձեռք է բերել իրավունք, ապա այն պահպանում է իր նշանակությունն ու ուժը, իսկ օրենքի այնպիսի փոփոխությունները, որոնց պայմաններում փոփոխվում են այդ իրավունքի ձեռքբերման պայմանները, կամ այդ նոր պայմաններում (նորմի հիպոթեզը) իրավունքի ձեռքբերումը լինում է անհնար, չեն տարածվում արդեն իսկ ձեռք բերված իրավունքների նկատմամբ: Դա նշանակում է, որ անձի վիճակը վատթարացնող օրենքը չի ստանում հետադարձ ուժ:

Լասալե-Սավիլիի դոկտրինին հակառակ՝ պոզիտիվիստական իրավաբանական շրջանակներում փորձ է արվել զարգացնելու օրենքին հետադարձություն շնորհելու հայեցակարգը: Համաձայն նշված հայեցակարգի՝ եթե օրենսդիրը միանշանակ իրավունք է ստանում այլ բան ասելու, օրինակ՝ սուբյեկտիվ իրավունքը վերացնելու, ապա նա իրավասու է սահմանելու նոր խաղի կանոններ: Այսպես, օրինակ՝ երբ պետությունը որոշում է ընդհանրապես վերացնել այս կամ այն իրավունքը կամ բացասական առումով փոփոխել դրա գործողության պայմանները, որոնցով փոփոխվում է դրա էությունը, ապա այդ դեպքում նախկինում առաջացած իրավահարաբերությունները կարգավորվում են նոր նորմով, իսկ նախկինում ձեռք բերված իրավունքները վերանում են, այսպիսով անձի վիճակը վատթարացնող օրենքը ստանում է հետադարձ ուժ:

¹ Տե՛ս **Строгович М.С.** Курс советского уголовного процесса: В 2 т. Т. I. М., 1968, էջ 48; Уголовно-процессуальное право Российской Федерации / Отв. ред. П.А. Лупинская. М., 2003, էջ 40-41; **Смирнов А.В., Калиновский К.Б.** Уголовный процесс: Учебник. М., 2008. էջ 37:

² Տե՛ս **Бахрах Д.Н.** Действие нормы права во времени: теория, законодательство, судебная практика. М., 2004. էջ, 167:

³ Տե՛ս **Savigny F.C.** System des heutigen romischen Rechts. Bd. 1. Berlin, 1840; **Lassalle F.** System der erworben. Rechte. Bd. I. Leipzig, 1861; **Фойницкий И.Я.** Курс уголовного судопроизводства. СПб., 1996. էջ, 58 – 59:

Ինչպես կարելի է նկատել, ՀՀ քր. դատ. գործող օրենսգրքում ներդրված է առաջին հայեցակարգի հիմնադրույթները:

Նկարագրված իրավիճակում պարզելու համար, թե արդյոք առաջանում է հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերը հետադարձության կարգով կիրառելու հարցը, քննարկման են ենթակա հետևյալ հարցադրումները.

առաջին՝ այն իրավահարաբերությունը, որը ենթակա է կարգավորման փոփոխված կամ նոր ընդունված նորմերով, արդյո՞ք առաջացել է, և ինչպիսի՞ն է այդ իրավահարաբերության բնույթը,

երկրորդ՝ նախքան քրեադատավարական օրենքում փոփոխություն կամ լրացում կատարելն անձն արդյո՞ք օժտված է եղել որոշակի իրավունքով, որը սահմանավակել է, կամ ունեցել է որոշակի կարգավիճակ, որը վատթարացել է օրենքի փոփոխության հետևանքով:

Առաջ անցնելով՝ անդրադառնանք երկրորդ հարցադրմանը. արդյո՞ք մեղադրյալի բացակայությամբ վարույթը կարգավորող նորմերը իրենց բնույթով իրավունքից զրկող, այն սահմանափակող կամ մեղադրյալի վիճակը վատթարացնող են, թե՞ ոչ: Հարկ է նկատել, որ մեղադրյալի բացակայությամբ վարույթի կարգը սահմանող քրեադատավարական նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ դրանք իրենց բնույթով մեղադրյալի իրավունքները սահմանափակող կամ դրանցից զրկող չեն: Այդ նորմերը չեն բացառում մեղադրյալի՝ գործի քննությանը մասնակցելու իրավունքը և ոչ էլ սահմանափակում են դրանք: Վարույթի նշված կարգի կիրառման հիմքը մեղադրյալի կողմից գործի քննությանը մասնակցելու իր իրավունքից հրաժարումն է: Դա չի նշանակում, որ մեղադրյալի ներկայանալու դեպքում ինքը զրկվելու է իր գործով հետագա վարույթին մասնակցելու հնարավորությունից: Ավելին, վարույթի նշված կարգը կանոնակարգող նորմերը լրացուցիչ երաշխիքներ են նախատեսում իր իրավունքից հրաժարված մեղադրյալի համար, որպեսզի երաշխավորվի հանրային և դրան հակադիր մասնավոր շահերի հավասարակշիռ պաշտպանությունը:

Ինչ վերաբերում է հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերը որպես անձի վիճակն այլ կերպ վատթարացնող դիտելուն, ապա հարկ է նկատել, որ դատավարագիտության մեջ արդարացիորեն նշվում է՝ քրեադատավարական օրենքի շրջանակներում հնարավոր չէ խոսել անձի վիճակի «բարելավման» կամ «վատթարացման» մասին¹: Ասվածը հավասարապես վերաբերելի է հեռակա վարույթին²:

Մեր ընդդիմախոսները կարող են ասել, որ հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերի կիրառման դեպքում չի գործի վարույթը կասեցնելու հիմքը, վարույթի բնականոն ընթացքի շնորհիվ հնարավոր կլինի մեղադրյալի բացակայությամբ դատավճճի կայացումը, այդ թվում՝ վերջինիս մեղքի հաստատումը, ինչը նրան կդնի ավելի վատթար վիճակում, քան նախկինում էր: Թեև լայն մեկնաբանման դեպքում կարելի է առանձնացնել խնդիրներ, որոնք հեռակա վարույթի դեպքում մեղադրյալի համար կարող են առաջացնել առավել ոչ բարենպաստ վիճակ, քան այդ վարույթը չկիրառելու դեպքում է: Սակայն հարկ է ընդգծել, որ հակաիրավական արարք կատարելով (forfeiture by wrongdoing) կամ իրավունքի չարաշահմամբ գործի քննությունից խուսափելու դեպքում մեղադրյալը չի կարող ունենալ լեգիտիմ ակնկալիք իր

¹ St`u Kurs uголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. – 2-е изд., испр. – М.: Статут, 2017, էջ 252:

² ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածից բխող օրենքի հետադարձ ուժի կանոնը կիրառվում է հանցագործություն և պատիժ սահմանող դրույթների նկատմամբ: Որպես կանոն դրանք կիրառելի չեն դատավարական նորմերի նկատմամբ, որոնք, tempus regit actum (օրենքի գործողության ժամանակը) սկզբունքի համաձայն, կիրառվում են անմիջականորեն: St`u Scoppola v. Italy (№ 2) (Սկոպպոլան ընդդեմ Իտալիայի) № 10249/03, 17 սեպտեմբերի 2009 թ.:

նկատմամբ այն ինստիտուտների նույնպայման կիրառման, որը հնարավոր է իրավաչափ վարքագիծ դրսևորելու պարագայում: Այլ խոսքով՝ անձի հակաիրավական վարքագիծը չեզոքացնում է այն բոլոր լեգիտիմ ակնկալիքները, որոնք կարող էին տրվել անձին իրավաչափ վարք դրսևորելու դեպքում:

Բացի այդ՝ ինչպես նշվեց, մեղադրյալի բացակայությամբ վարույթը քրեական գործով քննության առանձնահատուկ դատավարական ձև է, որը ենթադրում է քրեական գործի քննություն ամբաստանյալի բացակայությամբ, ինչը զուգորդվում է արդար դատաքննության իրավունքից որոշակի վերապահումներով: Դրանց հիմքում ընկած է անձի կողմից սեփական վարքագծով գործի քննությանը մասնակցելու իր իրավունքի իրացումից հրաժարվելը: Հետևաբար այս վարույթի կիրառման խնդիրը ոչ այնքան դրա՝ անձի վիճակը վատթարացնող բնույթը գնահատելու, որքան անձի կողմից իր իրավունքից հրաժարվելու փաստը հավաստելն է:

Այսպես, ինչպես արդեն նշվել է, այս վարույթի կիրառման հիմքում ընկած է մեղադրյալի՝ գործի քննությանը մասնակցելու իր իրավունքի իրացումից հրաժարվելու գաղափարը: Այսպես, օրինակ, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, դատաքննությունն *in absentia* (բացակայությամբ դատապարտված անձի) անցկացնելը համահունչ է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, եթե հաստատվել է, որ անձը հրաժարվել է դատաքննությանը ներկա գտնվելու և իրեն պաշտպանելու իրավունքից կամ որ մտադիր է եղել խուսափել դատաքննությունից¹:

Ասվածի համատեքստում արդար դատաքննության երաշխիքների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից օգտվելը մեղադրյալի իրավունքն է, ով կարող է նաև իր դրսևորած վարքագծով հրաժարվել դրանցից: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի ո՛չ բառացի և ո՛չ էլ իմաստային մեկնաբանությունը չի արգելում անձին արդար դատաքննության երաշխիքներից իր ազատ կամքով, կա՛մ բացահայտ, կա՛մ ենթադրաբար հրաժարվելը: Այնուամենայնիվ, այդպիսի հրաժարումը, եթե այն արդյունավետ է Եվրոպական կոնվենցիայի նպատակների համար, պետք է հաստատվի միանշանակորեն և ապահովվի նվազագույն երաշխիքներով՝ ըստ կարևորության: Ի հավելումն, այն չպետք է հակասի որևէ կարևոր հանրային շահի:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ընդունելի համարելով, որ մեղադրյալն իր վարքագծով կարող է նաև անուղղակիորեն հրաժարվել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված կարևոր իրավունքից, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պահանջում է հիմնավորել, որ անձը կարող էր ողջամտորեն կանխատեսել իր վարքագծի հետևանքները²:

Կարելի է փաստել, որ գործող քրեական դատավարության օրենսգիրքը մինչև մեղադրյալի բացակայությամբ վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելը չէր նախատեսում քրեական վարույթից մեղադրյալի խուսափելու դեպքում գործի հետագա քննությունը շարունակելու, մասնավորապես դատական քննություն իրականացնելու հնարավորություն: Մինչև մեղադրյալի բացակայությամբ վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելը օրենսդրական կարգավորման

¹ *St' u mutatis mutandiis* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Sejdovic v. Italy* գործով վկայակոչված վճիռը, 82-րդ կետ:

² *St' u* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Hermi v. Italy* գործով 2006 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 18114/02, 73-րդ կետ, *Sejdovic v. Italy* գործով 2006 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 56581/00, 86-րդ կետ, *Hermi v. Italy* գործով 2006 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 18114/02, 74-րդ կետ, *Sejdovic v. Italy* գործով 2006 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 56581/00, 87-րդ կետ:

մեխանիզմում քրեական վարույթից մեղադրյալի բացակայության հիմքով առաջացած հարաբերությունները ենթակա էին կարգավորման վերոնշյալ նորմերի բովանդակությամբ, և նման պայմաններում գործի քննությունից խուսափող մեղադրյալի վերաբերյալ վարույթը շարունակելու և դատավճիռ կայացնելու հնարավորությունը բացառված էր, որպիսի պայմաններում մեղադրյալը կարող էր գիտակցել գործի քննությունից խուսափելու դեպքում վարույթի ընդհատման, այլ ոչ թե դրա շարունակվելու հնարավորությունը: Այսինքն՝ վարույթին մասնակցելուց հրաժարվելու պարագայում իր բացակայությամբ գործի քննությունը շարունակվելու իրավաչափ հնարավորության որպես իր վարքագծից ածանցված հետևանքի մասին մեղադրյալը չէր կարող տեղյակ լինել, և այդ հետևանքն ինքնին չէր կարող կանխատեսելի համարվել վերջինին համար: Սակայն այդ նորմերի ուժի մեջ մտնելուց հետո հետագա վարույթին մասնակցելուց հրաժարվելը իրավունքից հրաժարման լռելյայն համաձայնություն է, որը որպես իրավաբանական փաստ ընկած է նշված վարույթի կիրառման հիմքում: Հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելուց հետո իր վարքագծի հետևանքները ոչ միայն ամրագրված են լինում օրենքով, այլ նաև կանխատեսելի են դառնում անձի համար (այս մասին հաջորդիվ)¹:

Իսկ ինչ վերաբերում է առաջին հարցադրմանը, ապա հարկ է արձանագրել, որ հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերը կարգավորում են այն հարաբերությունները, որոնք առաջանում են քրեական վարույթից մեղադրյալի խուսափելու իրավաբանական փաստերի հիման վրա: Հետևաբար, այս դեպքում առաջանում են որոշակի իրավահարաբերություններ, որոնք մինչև մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելը ենթակա էին կարգավորման այլ կերպ, իսկ դրանց ուժի մեջ մտնելուց հետո՝ այլ:

Սակայն հարկ է նկատել, որ քննարկվող իրավիճակում վարույթից մեղադրյալի խուսափելու փաստով առաջացած իրավահարաբերությունը այնքան ժամանակ, քանի դեռ մեղադրյալը շարունակում է վարույթից խուսափել, ընթացքի մեջ է ու դեռ չի ավարտվում:

Կարելի է նկատել, որ վարույթից մեղադրյալի խուսափելու փաստով առաջացած իրավահարաբերությունն իր բնույթով **տևող է**. սկսվում է մեղադրյալի խուսափելու պահից, ձգվում այնքան ժամանակ, քանի դեռ մեղադրյալը խուսափում է մասնակցել քրեական վարույթին: Փաստորեն այն դեպքերում, երբ քրեական վարույթից մեղադրյալի խուսափելը ժամանակագրական առումով նախորդել է հեռակա վարույթը կարգավորող նորմերի ուժի մեջ մտնելուն, ստեղծվում է մի իրավիճակ, որ տվյալ վարույթի կիրառման հիմքը ի հայտ է գալիս մինչև տվյալ նորմերի ուժի մեջ մտնելը, սակայն պահպանվում է հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերի գործողության ընթացքում: Եվ այն դեպքում, երբ հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերը մտնում են ուժի մեջ, անձը պարտավորվում է իր վարքագիծը համապատասխանեցնել այդ նորմերի պահանջներին, ընտրել իր համար ցանկալի վարքագծի տարբերակը. կա՛ն վերադառնալ և մասնակցել վարույթին, կա՛ն շարունակել խուսափել վարույթին մասնակցելուց՝ այդ կերպ հրաժարվելով վարույթին մասնակցելու իր իրավունքի իրացման հնարավորությունից:

¹ Եվրոպական դատարանը Էնթոնի Ջոնսոնը ընդդեմ միացյալ թագավորության գործով նշել է, որ դիմումատուն տեղյակ էր դատաքննության օրվա մասին և կանխամտածված ընտրել էր դատաքննությանը չներկայանալու տարբերակը: Սակայն, դատաքննության պահին Անգլիայի օրենքով հստակ սահմանված չէր, թե արդյոք հնարավոր էր առանց ամբաստանյալի ներկայության դատաքննություն անցկացնել: Դիմումատուն, որը մասնագետ չէ, չէր կարող ակնկալել, որ դատաքննության առաջին օրը չներկայանալը կհանգեցնե՞ր այն բանին, որ իր դատաքննությունը կանցկացվեր, և ինքը կդատապարտվեր առանց իր և իր ներկայացուցիչների ներկայության: Ուստի չի կարելի պնդել, որ նա հստակ և կանխամտածված հրաժարվել էր Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված իր իրավունքներից:

Ասվածի համատեքստում հարկ է արձանագրել, որ իրավունքի համակարգում գործում է հրապարակված օրենքի իմացության կանխավարկածը, իսկ հակառակը ապացուցելու պարտականությունը կրում է ոչ թե վարույթն իրականացնողը, այլ տվյալ նորմերի հասցեատեր համարվող մեղադրյալը: Վերջինս՝ որպես շահագրգիռ սուբյեկտ, վարույթի մասնակից, անձամբ է կրում իր վերաբերյալ վարույթին առնչվող նորմերին ծանոթանալու և դրանց համապատասխան վարքագիծ դրսևորելու պարտականությունը:

Հետևաբար, եթե հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերը մտել են ուժի մեջ, որից հետո անձը շարունակել է խուսափել իր վերաբերյալ վարույթին մասնակցելուց, ապա կարելի է ասել, որ վերջինս լռելյայն հրաժարվում է վարույթին մասնակցելու իր իրավունքի իրացման հնարավորությունից՝ այդպես իրավաչափ դարձնելով իր վերաբերյալ գործով հեռակա վարույթի կիրառման հնարավորությունը:

Մեղադրյալի բացակայությամբ վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելուց հետո այն գործերով, որոնցով մեղադրյալի վարույթից խուսափելը նախորդել է այդ նորմերը ուժի մեջ մտնելուն, և վերջինս շարունակում է խուսափել վարույթին մասնակցելուց, կարելի է ասել, որ այդ նորմերը տարածվում են ոչ թե արդեն իսկ ծագած իրավահարաբերության նկատմամբ, այլ քննարկվող իրավիճակում գործ ենք ունենում նոր առաջացած հարաբերության հետ, որը գործում է օրենքը ուժի մեջ մտնելուց հետո: Այդ հարաբերության ծագման համար որպես իրավաբանական փաստ է հանդես գալիս օրենքը ուժի մեջ մտնելուց հետո մեղադրյալի՝ գործի հետագա քննությանը մասնակցելու իր իրավունքից հրաժարվելը (կամ օրենքի տված հնարավորությունից օգտվելը): Տվյալ դեպքում իր սուբյեկտիվ իրավունքից մեղադրյալի հրաժարումը տեղի է ունենում այն ձևով, որ վերջինս շարունակում է խուսափել գործի քննությանը մասնակցելուց: Քրեական վարույթին մասնակցելուց մեղադրյալի հրաժարվելը (խուսափելը) հեռակա վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելուց հետո ստեղծում է նոր իրավահարաբերություն, որն արդեն ենթակա է լինում կարգավորման նոր ուժի մեջ մտած օրենքով:

Ասվածը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որը մեղադրյալի բացակայության կարգը սահմանող օրենքի ընդունումից հետո գործի քննությանը (մասնավորապես դատական նիստերին) մեղադրյալի մասնակցության պարտադիրությունը վերանում է, և սկսում է գործել քրեական վարույթին մասնակցության իրավունքից հրաժարվելու հայեցակարգը (հնարավորությունը): Այդ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո մեղադրյալի՝ վարույթին մասնակցելուց հրաժարվելը կամ, որ նույնն է՝ գործի քննությանը չներկայանալը կարող է դիտվել (պետք է դիտել) գործի հետագա քննությանը մասնակցելու իրավունքից հրաժարում, և մեղադրյալի բացակայության վարույթի կարգը կիրառել տվյալ գործի նկատմամբ: Այս դեպքում գործ ենք ունենում ոչ թե օրենքի հետադարձ կիրառման, այլ օրենքի անմիջական գործողության հետ:

Ասվածը կարելի է հիմնավորել հետևյալ օրինակով. պատկերացնենք, որ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է բոլոր իրավիճակներում մեղադրյալի համար պաշտպանի պարտադիր մասնակցություն: Վարույթի ընթացքում քրեական դատավարության օրենսգրքում կատարվում են փոփոխություններ, և նախատեսվում է մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարվելու հնարավորություն: Եվ այդ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո որ պահին մեղադրյալը հրաժարվի պաշտպանից և ցանկություն հայտնի իր պաշտպանությունն իրականացնել անձամբ, ապա պետք է կիրառվի նոր ուժի մեջ մտած այդ օրենքը, իսկ վերջինիս կիրառումը կլինի ոչ թե հետադարձ, այլ օրենքի անմիջական գործողություն:

Հեռակա վարույթի կարգը սահմանող օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեղադրյալի՝ վարույթին մասնակցելուց հետագա հրաժարումը իրականացվում է պասիվ վարքագիծ դրսևորելով (մեղադրյալը պարզապես շարունակում է թաքնվել

գործի քննությունից). վերջինս թեև գրավոր կամ բանավոր հստակ դիրքորոշում չի արտահայտում վարույթին չմասնակցելու վերաբերյալ, սակայն նրա կոնկյուդենտ գործողությունները կամ լռությունը վկայում են այս իրավունքից հրաժարվելու մասին: Սակայն ասվածը չի նշանակում, որ հնարավոր չեն դեպքեր, որ մեղադրյալը, չներկայանալով վարույթ իրականացնող մարմին, հեռակա համաձայնություն տա (միջնորդի) իր նկատմամբ նշված վարույթի կարգը կիրառելու վերաբերյալ: Նման պայմաններում վերջինիս գործով հեռակա վարույթի կիրառման մերժումը չի կարող հիմնավորվել որևէ իրավական շահով:

Հետևաբար կարելի է արձանագրել, որ մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի կարգը սահմանող նորմերի ուժի մեջ մտնելուց հետո քրեական վարույթին մասնակցելուց մեղադրյալի խուսափելը որպես իրավաբանական փատ, առաջացնում է նոր իրավահարաբերություն, որը սկիզբ է դնում նոր վարույթի, որի պայմաններում օրենքի հետադարձության խնդիրը վերանում է, և օրենքի անմիջական գործողության ուժով այդ իրավահարաբերության նկատմամբ նոր ընդունված նորմի (նորմերի) կիրառումը դառնում է իրավաչափ: Նման դեպքերում, փաստորեն, կիրառելի է լինում այն օրենքը, որը գործել է վարույթի տվյալ փուլում:

Այսպիսով կարծում ենք, որ մեղադրյալի բացակայությամբ վարույթի կարգը նախատեսող նորմերի ուժի մեջ մտնելուց առաջ նախաձեռնված վարույթներով հեռակա վարույթ կարող է կիրառվել, եթե շարունակում է առկա լինել այդ վարույթը կիրառելու հիմքը, և բացակայում են վարույթը բացառող հանգամանքները: Փաստորեն այստեղ անհրաժեշտ չէ շեղվել քրեադատավարական այն ելակետային նորմից, որի համաձայն՝ վարույթը կարգավորվում է տվյալ պահին գործող օրենքով և թույլ չի տալիս անձի վիճակը վատթարացնող դատավարական նորմերի հետադարձ գործողություն:

ПО ВОПРОСУ ПРИМЕНЕНИЯ ПРОИЗВОДСТВА, ОСУЩЕСТВЛЯЕМОГО В ОТСУТСТВИЕ ОБВИНЯЕМОГО

Петик Мкртчян

*Аспирант кафедры уголовного процесса
и криминалистики юридического факультета ЕГУ,
Заместитель начальника юридического управления
Комитета государственных доходов РА*

В представленной статье рассматривается вопрос о том, может ли порядок производства, осуществляемого в отсутствие обвиняемого, применяться по уголовным делам, по которым производство было инициировано до вступления в силу норм, регламентирующих указанное производство. Автор на основе законодательных регулирований, судебной практики и теоретической литературы предлагает решение, которое сделает возможным единообразное применение закона и обеспечит единство правовой практики.

ON THE ISSUE OF THE APPLICATION OF PROCEEDINGS CARRIED OUT IN THE ABSENCE OF THE ACCUSED

Petik Mkrtchyan

*PhD Student at the YSU Chair of
Criminal Proceedings and Criminalistics,
Deputy Head of the Legal Department of
the State Revenue Committee of the RA*

The article considers the question of whether the procedure of proceedings carried out in the absence of the accused can be applied in criminal cases in which the proceedings were initiated before the entry into force of the norms regulating the said proceedings. The author, based on legislative regulations, judicial practice and opinions expressed in the theoretical literature, proposes a solution that will make possible the uniform application of the law and ensure the unity of practice.

Բանալի բառեր – մեղադրյալի բացակայությանը վարույթ, օրենքի հետադարձ ուժ, իրավունքից հրաժարում, իրավահարաբերության ծագում:

Ключевые слова: Производство в отсутствие обвиняемого, обратная сила закона, отказ от права, возникновение правоотношения.

Key words: Proceedings in the absence of the accused, the retroactive force of the law, waiver of the right, the emergence of a legal relationship.